«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ-Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ- մայրենի, հայոց լեզու, գրականություն
ՀԵՂԻՆԱԿ- Տաթևիկ Հունանյան
ՄԱՐԶ- ք. Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-Սմբատ Բյուրատի անվան հ. 125 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն..... 3

2. ԳԼՈՒԽ 1. Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման

շրջանակում.....7

3. ԳԼՈՒԽ 2. Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում..... 12

4.Եզրակացություն.....20

5.Գրականության

ցանկ.....22

Ներածություն

Արժեքները և արժեքային համակարգը մարդու և ողջ հասարակության կյանքի և մշակույթի անբաժանելի մասն են:

Յուրաքանչյուր մարդու, եթե ուղղենք հարց՝ ինչն է քեզ համար կարևոր, և որն է կյանքում գլխավորը, կպատասխանի անհատապես: Մեկը կասի, որ կյանքում ամենակարևորը կարիերան ու բարեկեցությունն է, մյուսը կպատասխանի, որ իշխանություն և կարգավիճակ է հասարակության մեջ, երրորդը որպես օրինակ կբերի ընտանիքը, մյուսը՝առողջությունը և այլն: Շարքը կարող է բավականին երկար լինել, բայց պետք է միայն հասկանալ, որ այն, ինչ կարևոր է մարդու համար, վերահսկում է նրա գործողությունները: Ելնելով իր առաջնահերթություններից՝ նա կընկերանա, կրթություն կստանա, աշխատանքի վայր կընտրի, այլ կերպ ասած՝ կկառուցի իր կյանքը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

ՀՀ-ում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչի՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի գծով սովորողների պատրաստվածությունը ներկայացնող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է ապահովի ուսումնական հաստատությունը: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 136 որոշման համաձայն՝ որպես հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջադյունքներ՝ շրջանավարտը պետք է ճանաչի և պահպանի հասարակական վարքի՝ իրեն առնչվող կանոններն ու իրավունքները, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասով,

ցուցաբերի հարգանք մարդկանց նկատմամբ, ընկալի յուրաքանչյուր մարդու առանձնահատուկ և արժեքավոր լինելը, ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը. ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք, ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ, անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները, դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում, ներկայացնի հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում, կարևորի իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում:

Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Յուրաքանչյուր ոք, ով ուսուցչի բարձր կոչմամբ մուտք է գործում կրթական միջավայր, գիտակցում է՝ ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ:Յուրաքանչյուր անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի,ազգի, հավատի,ընտանիքի,ազգային արժեքների նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել,հասցնել գիտակցական ամենաբարձր մակարդակին: Այդ ամենի համար պետք է կարևորագույն բոլոր արժեքները սինթեզվեն և դառնան կուռ ամբողջություն:

Մայրենի, գրականություն առարկաների ուսուցումը կրթության այն բովանդակության տիրույթն է, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզական-պատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում:

Արժեքային համակարգի ձևավորման նպատակն է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը,

  դրսևորի դրան հասնելու ձգտումը,կամք,

- ունենա ազգային ինքնագիտակցություն,
- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության

  անհրաժեշտությունը,

- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...
- Հետազոտության նպատակը տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի ձևավորումն է, վերլուծական կարողությունների, քննադատական մտքի զարգացումը, որ մարդը չվերածվի միայն տնտեսական արժեք ունեցող մարդկային կապիտալի՝ անձնային թույլ որակներով, մարդկային պարզունակ ընկալումներով:
- Թեման արդիական է, քանի որ տեխնիկական հեղաշրջման այս հարափոփոխ դարում, երբ ամեն ինչ մեքենայացվում է, թվայնացվում, այժմ գերիշխող է անհատի էգոն: Մինչդեռ փոխհարաբերություններում կարևոր են մարդկայինը, խիղճը արթուն պահելը, ազնվությունը, անարդարությանն արձագանքելը, հանդուրժողականությունը, կարեկցանքը, գութը...Ցավ զգում են շատերը, բայց ոչ բոլորն են ունակ ուրիշի ցավով ապրելու, ապրումակցելու:

Գլուխ 1. Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը ուսուցման գործընթացում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավականին լայն շառավիղով, առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, իմացական, հոգևոր, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է մարդու մարդու բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը

մանկավարժին ոչ հարիր մոտեցում է: Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մանսավորապես՝ անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որ յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենիքի նկատմամբ սիրո, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները : Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, իր իսկ ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործող անհատակություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը

սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ,կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան, առավել հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կենսակերպը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունած կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունը, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցակցնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը

դեպի մշակույթի որոշակի աստիճանակարգությանը: Սակայն պետք է նշել, որ այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ձեւավորումն» է: Սովորողի անձի արժեքների ձեւավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Հեղինակավոր մարդ կարող են լինել նաև հենց աշակերտի դասղեկը, դպրոցի տնօրենը, ուսուցիչը: Աշակերտը կարող է նրանցից ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես էլ բացասական: Ցավոք, բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնավոր գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ մանկավարժը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովադակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք : Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական գործունեության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում,

դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները : Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացած կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրական հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական,խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունը, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն առավել ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունը, գործում է անկաշկանդ, որն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ: Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, տարիքային գործոնը, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների, միջանձնային հարաբերությունները կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն :

Գլուխ 2. Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման շրջանակներում

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման

դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող լեզուները, մասնավորապես նկատի ունենք հայոց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ լեզու և մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Լեզվի անհամբելի հարստությունները փոռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարը, գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով:

Հանրակրթական ծրագրերում նկարագրվում են ակնկալվող վերջնարդյունքներ, որոնք ուղղված են կարողունակությունների ձևավորմանը բոլոր կարողունակությունների ձևավորման գործում անվիճելի է հայոց լեզվի դերը՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Պակաս կարևոր չէ նաև գրականության դերը ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային, մասամբ նաև այլ կարողունակությունների ձևավորման գործում:

Հայոց լեզվի, գրականության ուսումնասիրությունն ինքնանպատակ չէ: Լեզուն մտածողություն է, բանալի՝ մյուս գիտությունների համար, բարձրագույն արժեք՝ ազգապահպանության գործում: **«Լեզուդ փոխի՛ր , հավատդ ուրացի՛ր, էլ ինչո՞վ կարող ես ասել , թե որ ազգից ես»**: Այս գաղափարը հայոց լեզվի ուսուցման իմ գործունեության ողնաշարն է, իմ հավատամքը:

Բարդ ու հակասական մեր օրերում, երբ համաշխարհայնացման հորձանուտում ի հաշիվ ազգային դիմագծի օրեցօր ստվարանում է «աշխարհաքաղաքացիների» բանակը, ի թիվս այլ արժեքների վտանգված է մեր լինելիության գլխավոր խորհուրդներից մեկը՝ մայրենին. այն գտնվում է անմխիթար և անխնամ վիճակում: Ամենուր ու ամեն վայրկյան հանդիպում ենք աղաղակող սխալների, խոսքային վթարների, որոնք սպառնում են վերածվել աղետի: Մենք խնդիր ունենք սերունդների թողնելու մի այնպիսի հաղորդակցման միջոց, որը եղել է մեր պապերի հաղորդակցման միջոցը, մեր հայրենիքի պահպանման ու շարունակության զենքը: Իսկ այսո՞ր. . .

Մաքուր ու անաղարտ լեզու քարոզելու և տարածելու գլխավոր միջոցները՝ մամուլն ու հեռուստաթերը, ողողված են աղբով՝ գռեհկաբանություններով, ժարգոնային արտահայտություններով, սխալ, օտար բառերով ու բառաձևերով, անհասկանալի ու մանվածապատատ ձևակերպումներով, անհարկի բառագործածումներով և այլն: Պետական այրերի բառապաշարը, մեղմ ասած, չի փայլում, ընտանիքներում ու դպրոցներում, այո՛,

գիտելիքի դարբնոցներում հնչում է մեր համակարգված, հարուստ, ճկուն ու գեղեցիկ լեզվից խիստ տարբերվող լեզու. . .

Այսօր առավել քան երբևէ չափազանց արդիական ու հնչեղ է ամեն հայի մեջ մեր մայրենին արժևորելու, պահել-պահպանելու գիտակցությունը սերմանելու հարցը։

Ի՞նչ անել. . . Այդ նպատակին պետք է ծառայեցնել ամեն ինչ։ Յուրաքանչյուրս իր տեղում, իր ձևով, իր կարողացածի չափով ու իր միջոցներով։ Եվ ես՝ որպես հայ մարդ, որպես մայրենիի անաղարտության նախանձախնդիր մի մանկավարժ, ինձ առավել պարտավորված եմ զգում **«մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար»** հայոց լեզուն անաղարտ պահելու, մեր իսկ ոտնձգություններից պաշտպանելու գործում։

Հայոց լեզվի և գրականության ուսումնառության ընթացքում աշակերտներս կազմել են «Տասը արժեքների համակարգ»՝ դրանում ներառելով իրենց իսկ կողմից սահմանված բազմաթիվ արժեքներից ամենակարևորները, որոնք առանցքային են հայի, քաղաքացու, քաղաքակիրթ մարդու համար։ Դրանք են՝

- **հայրենիք և պետականություն**
- **զինվոր և բանակ**
- **ընտանիք և սեր**
- **հայոց լեզու և հավատք**
- **ազատություն, անկախություն**
- **կրթություն**
- **մշակույթ**
- **ընկերասիրություն**
- **առողջություն**
- **հարստություն**

Սրանք այն արժեքներն են, որոնց դերն ու նշանակությունը հասկացել են ինչ-որ ստեղծագործության ուսումնասիրության, վերլուծության, քննարկման, որևէ կերպարի բնութագրման արդյունքում:

Ժամանակ առ ժամանակ, որևէ իրադարձությամբ կամ հոգեվիճակով պայմանավորված, այս արժեքներից մեկը իր տեղը զիջում է մյուսին, բայց երբեք դուրս չի մղվում տասնյակից. այն միշտ մնայուն է: Օրինակ՝ ներկա իրավիճակում, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումներին հետևելով, երբ մշուշոտ է Հայաստանի տարածքային ամբողջականության, նաև անկախության հարցը, արժեքային համակարգը՝ որպես բացարձակ ու ժամանակների փորձությանը դիմացած արժեքներ, գլխավորում են հայրենիքն ու պետականությունը, բանակն ու զինվորը, հայոց լեզուն ու հավատքը, որոնք դարեր շարունակ եղել են հայապահպանության կռվանները: Խիստ արդիական է Մ. Խորենացու «Հայոց պատմություն» մատյանի «Ողբ» հավելվածը, որը ուսումնասիրողին պարտավորեցնում է լինել ճշմարիտ հայրենասեր, իսկական քաղաքացի, ազգային մտածողության կրող: 9-րդ դասարանի աշակերտը զուգահեռներ է անցկացնում 5-րդ և 21-րդ դարերում ծավալվող իրադարձությունների, հայրենիքի վիճակի միջև, զարգանում է նաև նրա քննադատական, վերլուծական մտածողությունը, նա արտահայտում է կարծիք, հիմնավորում այն, բանավիճում ընկերների հետ:

Աշակերտներիս ձևավորած արժեքների համակարգը երբեմն գլխավորում է առողջությունը, դրան հաջորդում է հարստությունը (դրամը), քանի որ պարզվում է՝ հիվանդ է մայրը կամ հարազատներից մեկը, այսինքն՝ **«ընտանիք»** արժեքն է այդ պահին կարևորվում: Դրանք շաղկապված են միմյանց, պայմանավորված մեկը մյուսով:

Ազգային հոգեկերտվածքի բացառիկ շտեմարան է հայ բանահյուսության գլուխգործոցը՝ «Սասնա ծռեր» էպոսը, որում ժողովուրդը կերտել է իրեն, ձևակերպել հայի, հայկականի վերաբերյալ իր պատկերացումները, բանաձևը: Աշակերտը նախ վարակվում է իմ՝ այս գործի նկատմամբ տածած սիրով ու

հիացմունքով, ապա Սասնա ծռերի խենթությամբ և գնահատում նրանց ազատաբաղձությունը, շիտակությունը, միամտությունը, ի դեմս Խանդութի, Ծովինարի, Դեղձուն Ծամի՝ կարևորում հայ կնոջ դերը օջախի, ընտանեկան սրբությունների պահպանման գործում, նրանց հակադրում Ձենով Օհանի կնոջը՝ Սառային, ոչ թե որ **«օտար զարմից** է» , այլ առաքինի, ազնիվ ու սրտացավ չէ։

Ծնողների, տարիքով մեծերի նկատմամբ հարգանք դրսևորելու օրինակնե՞ր են հարկավոր, խնդրե՞մ . Դավիթը, հարգելով Մելիքի մորն ու քրոջը, երկու զարկ է բաշխում նրանց՝ ցուցաբերելով երախտագիտություն և հարգանք։ Հանդուրժողականության, այլոց հիմնարար ազատությունները հարգելու, մարդասիրության դրսևորումներ են Դավթի կողմից թշնամու զորքն ազատ արձակելը՝ արաբ ծերունու խոսքը հարգելով։

Ծավալվում են քննարկումներ, երբեմն չեն ողջունում Դավթի արարքը, քանի որ կարծում են՝ դա թշնամու կողմից ընկալվում է որպես թուլություն . նրա հետ պետք է խոսել իր լեզվով, իր մեթոդներով։ Երբեմն անզոր եմ լինում 15-ամյա պատանիներին հակառակը համոզել. չէ՞ որ մեր նորօրյա պատմության ականատեսն են նրանք, կորցրել են եղբայր, հայր, լսել սահմռկեցուցիչ պատմություններ հայ գերիների, կանանց խոշտանգումների, գնդակահարությունների մասին, մյուսն էլ փայփայում է մի թաքուն հույս, որ ընկերոջ անհայտ կորած հայրը ողջ ու անվնաս կվերադառնա ադրբեջանական գերությունից, և նրա գեղեցիկ աչքերը վերստին կփայլեն . . .

Թե ինչպիսին պետք է լինի իսկական ղեկավարը, առաջնորդը, աշակերտը գնահատում է, երբ Սանասարն ու Բաղդասարը տներ են կառուցում նախ հասարակ մարդկանց համար կամ իրենց կառուցած բերդին անուն տալու պատիվն էլ վստահում են ծերունուն՝ հարգելով նրա տարիքն ու արժևորելով կենսափորձը։

Աշխատասիրությունը, աշխատանքը բարեկեցության հիմքն են. **«Աշխարհ գութնի մոտ կլիանա»,-** ասում է ժողովուրդը:

Հայապահպանության, ազգային դիմագծի, ինքնուրույնության պահպանման ամենավստահելի, ամենափորձված, ամենազորեղ միջոցը բազմալեզու, բազմաժխոր ու խայտաբղետ այս աշխարհում լեզուն է, հայո՛ց լեզուն, որը հային հայ է պահում երկրագնդի բոլոր ծագերում:

Ազգային արժեհամակարգից նահանջելու, եվրոպական մեծ ու փոքր քաղաքների հետնախորշերում օտարին ձուլվելու, հայի արմատներից հեռանալու փող է հնչեցնում Խաչատուր Աբովյանի պատգամը, երբ ձևակերպում են վեպի գաղափարը. **<<Տասը լեզու սովորեցե՛ք, բայց ձեր լեզուն, ձեր հավատը ղայի՛մ բռնեցեք>>:**

Իմ դասաժամերին կարևորում եմ **հայրենիքու՛մ հայ մնալու** գաղափարը, այո՛,հայերեն, հայեցի ապրելը. տոնելով սուրբ Վալենտինի տոնը, Հոլլի կամ Հելոուին՝ չմոռանալ մեր սուրբ Սարգսի, Վարդավառի կամ Ծաղկազարդի մասին, ամենայն հարգանքով վերաբերվելով այլ ժողովուրդների մշակույթին՝ չկուրանալ օտարամոլության ախտից և չհրաժարվել ազգայինից, սեփականից, պահպանել մայրենիի անաղարտությունը և առաջնայնությունը:

Գրականության և հայոց լեզվի դասաժամերին, ապահովելով միջառարկայական կապեր գրեթե բոլոր առարկաների, հատկապես հայոց պատմության, աշխարհագրության, հայոց եկեղեցու պատմության, կերպարվեստի, երաժշտության հետ, հայրենաճանաչությունը, դրա արդյունքում էլ հայրենասիրությունը բարձր հիմքերի վրա են դրվում: Արվեստի նկատմամբ սեր և հետաքրքրություն է սերմանվում, երբ ունկնդրում են Կոմիտասի <<Կռունկը>>, <<Անտունին>>, ծանոթանում են որևէ կտավի ստեղծման պատմությանը կամ փորձում են վերլուծել, օրինակ, Վարդգես Սուրենյանցի <<Շամիրամը Արայի դիակի մոտ>> նկարը, մեկնաբանել գույների ընտրությունը, Շամիրամի հայացքի ուղղությունը կամ անկեղծ ու անմիջական մթնոլորտում բանավիճում, թե այս կամ այն ֆիլմը ,մուլտֆիլմը (իմ

խորհրդով կամ <<գովազդով>> դիտած) նկարահանելիս ռեժիսորն ինչքան է շեղվել բնագրից, իսկ ու՞մ խաղն են ավելի հավանում՝ Սոս Սարգսյանի՞, թե՞ Խորեն Աբրահամյանի, ու՞մ ձայնն է ավելի ազդեցիկ և նման հարցեր։.

Առարկաների դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն գրողների չնաշխարհիկ գործերին: Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները: Ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, բարություն, ազնվություն, սեր, ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն և այլ արժեքներ են սերմանում աշակերտների մեջ: Ուսուցիչները գրականության դասաժամերին Հայ գրողների ստեղծագործությունները ներկայացնելով մի ամբողջ արժեքային ֆոնդ են փոխանցում աշակերտներին: Բավական է նշել Եղիշե Չարենցի << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը, որը ձևավորում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեր առ հայրենիք և սեր դեպի հայոց մեծերը՝ Նարեկացի, Քուչակ: Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին մարդ մնալու արժեքը փոխանցենք: Եվ ինչպես ասել է մեծն Թումանյանը. Անց ենք կենում... միայն անմահ Գործն է խոսվում լավ ու վատ. Ա՜խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա Ու մարդ կերթա անարատ: Թումանյանի պոեմի գլխավոր միտքը բարի գործի անմահության գաղափարն է, որն ավելի խոր և ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրություն, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատում, մարդկային կյանքի անցողիկության միտքը: Մարդ լինելու արժեքն է, որ ամենակարևորն է ձևավորել աշակերտի արժեքային համակարգի հիմքում, որն էլ լավագույնս փոխանցվում է լեզու/գրականության դասաժամերին:

Գրական երկերի ուսումնասիրությունը դառնում է ժամանակավրեպ, եթե կորցնում է **կապը իրականության հետ**, արդիական հնչեղություն չի ստանում. ուսուցիչը, **ձեռքը կյանքի զարկերակին**, անգամ հազարամյա առասպելը պետք է

վերլուծի, ներկայացնի նոր ժամանակների համատեքստում, օգնի աշակերտին՝ նորօրյա շունչ ու գաղափար հաղորդել նրան. չէ՞ որ փոխվում են ժամանակները, իսկ իրական արժեքները՝ ոչ. կեղծ արժեքները չեն դիմանում մեծն Ժամանակի փորձությանը: Այդ կապը իրականության հետ կարելի է սերտ պահել անգամ հայոց լեզվի դասաժամին ցանկացած քերականական նյութի ուսուցման ժամանակ: Այսպես՝ հանձնարարում եմ հետևել օրվա պաշտոնական լրահոսին, գրառել առավել ուշագրավ մշակութային, մարզական, քաղաքական կամ ինչ-որ արտառոց իրադարձության վերաբերյալ նախադասություններ՝ առանձնացնելով, օրինակ, դերբայական դարձվածները, շրջասույթները կամ բազմակի անդամները և այլն: Աշխատանքը ներկայացնելիս բնականաբար կքննարկեն, կարտահայտեն կարծիք ու դիրքորոշում, որը բխում է իրենց, իրենց ընտանիքի արժեհամակարգից. . .

Արժեհամակարգի ձևավորման մեջ չի անտեսվում, հակառակը, մշտապես կարևորվում է էկոլոգիական դաստիարակությունը: «Բնությունը մեզնից վրեժխնդիր է լինում իր դեմ գործած հանցանքների համար». այս ձևակերպումով են ավարտվում այն բոլոր քննարկումները, որ վերաբերում են բնապահպանական խնդիրներին, շրջակա միջավայրի աղտոտվածությանը, կլիմայական փոփոխություններին: Այդ քննարկումների վերջնանպատակն է քաղաքացիական կեցվածք ու դիրքորոշում դաստիարակել, որ սովորողը իրեն պատասխանատու զգա անգամ հեռավոր Անտարկտիդայի սառույցների հալչելու համար (ինչին մինչ այդ թերահավատորեն էր վերաբերվում), տեսնի իր անխոհեմ վարքագծի ու իր շրջապատում կատարվող երևույթների միջև շղթայական կապը և դրսևորի հոգատար վերաբերմունք բնության, կենդանիների նկատմամբ, խնայողաբար օգտագործի ջուրը, թուղթը և այլն: Անտառները երկրագնդի թոքերն են, և հատած ամեն մի ծառ՝ թթվածնի կտրված մի աղբյուր, որից չեն օգտվի ո՛չ իրենք, ո՛չ իրենց սերունդները. այս գիտակցումով պետք է առաջնորդվի սովորողը և կտրված ամեն ծառի փոխարեն տնկի ու խնամի մի քանիսը, նույնն էլ հորդորի իր ընկերոջը, ծնողին, հայրենակցին. . .

Բնապահպանական դաստիարակության հնարավորություն ընձեռում են և՛ ծրագրային նյութերը, և՛ թելադրության ու փոխադրության ժողովածուները (դրանցում զետեղված նյութերը արժեքներ դաստիարակող, ինքնաճանաչման, սեփական ժողովրդի կյանքն ու ճակատագիրն ըմբռնելու կարողություն, կյանքում ու կենցաղում բարձր ճաշակ ձևավորելուն նպաստող գլուխգործոցներ են), անգամ եղանակն ու հատակին անփութորեն նետված հացի կտորը և այլն։

Արժեհամակարգի ձևավորմանը պետք է ծառայեցնել ամեն ինչ, դրան պետք է նպաստի ուսումնական գործընթացի ամեն բաղադրիչ ու միջոց , ուսումնական առարկա ու մասնակից, ողջ կրթական քաղաքականությունն ընդհանրապես :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի ուշադրության կենտրոնում: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ՝ աննկարագրելի բերկրանք է տեսնելը իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին: •Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

•Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը:

Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:

• Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:

• Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:

• Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները. • Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ: Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը: Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու: Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ: Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,
2. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը
3. Գևորգյան Ա. « Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների

   հայեցի դաստիարակության գործընթացում»
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
5. https://www.arlis.am/documentview